

## ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 101

1 հունիս, 2020 թվական

### ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N 298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 20-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի մայիսի 27-ի N 545-Ա, N 547-Ա, N 548-Ա, N 552-Ա, N 553-Ա և N 555-Ա հրամանների հիման վրա 2020 թվականի մայիսի 31-ին իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) գործունեության ծավալումը՝

1) Ա/Ձ «Արթուր Հակոբյան», Արարատի մարզ, գ.Արալեզ, Գ.Նժդեհ 45/2 (ՀՎՀՀ 47808764).

2) Ա/Ձ «Դավիդ Վարդանյան», Արարատի մարզ, ք. Արտաշատ, Երևան-Երասխ մայրուղի 22 (ՀՎՀՀ 83364046).

3) Ա/Ձ «Առնոլդ Դավթյան», Արարատի մարզ, ք. Արտաշատ, Սահմանապահների 1 (ՀՎՀՀ 47891631).

4) Ա/Ձ «Գարեգին Հովհաննիսյան», Շիրակի մարզ, ք. Գյումրի, Վ. Սարգսյան 1, թաղ. 86/7 (ՀՎՀՀ 57327001).

5) «Մասիս 7» ՍՊԸ, Շիրակի մարզ, գ. Ախուրյան, Գյումրու խճուղի 8 (ՀՎՀՀ 05800122).

6) Ա/Ձ «Նաիրի Աթաբեկյան», Տավուշի մարզ, գ. Ն. Ծաղկավան (ՀՎՀՀ 70906163).

7) Ա/Ձ «Արտուշ Գալստյան», Լոռու մարզ, Վանաձոր-Սպիտակ մայրուղի (ՀՎՀՀ 66902905).

8) Ա/Ձ «Ռոստոմ Մազոյան», Լոռու մարզ, գ. Ղուրսալի 13/6 (ՀՎՀՀ 66933062).

9) Ա/Ձ «Նորիկ Էհտիբարյան», Լոռու մարզ, Սպիտակ Վանաձորյան խճ. 1 (ՀՎՀՀ 66922144).

10) Ա/Ձ «Նորայր Մելիքսեթյան», Լոռու մարզ, Վանաձոր-Սպիտակ մայրուղի (ՀՎՀՀ 66828532).

11) Ա/Ձ «Գևորգ Հովհաննիսյան», ք. Երևան, Սարյան 9 (ՀՎՀՀ28006182).

12) Ա/Ձ «Անահիտ Սարգսյան», ք. Երևան, Սարյան 2-49 (ՀՎՀՀ30203768).

13) «Լայք Քաֆե» ՍՊԸ, ք. Երևան, Տերյան 25 (ՀՎՀՀ02635453).

14) Ա/Ձ «Անուշ Սիմոնյան», Կոտայքի մարզ, Արզական Անտառտնտեսություն 8-րդ փ. 23 (ՀՎՀՀ 40018002).

15) Ա/Ձ «Տիգրան Սահակյան», Կոտայքի մարզ, Երևան-Սևան մայրուղի, 37-րդ կմ (ՀՎՀՀ 40547155).

16) Ա/Ձ «Կարեն Եփրեմյան», Կոտայքի մարզ Երևան-Սևան մայրուղի, 29-րդ կմ (ՀՎՀՀ 40567512).

2. 48 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) գործունեության ծավալումը՝

1) Ա/Ձ «Հրանտ Չոբանյան», ք. Երևան, Սարյան 2/2 (ՀՎՀՀ20161075):

3. Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար Գեորգի Ավետիսյանին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը:

4. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:

5. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Արման Սարգսյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 01/06/20 15:17:39 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

Տ. ԱՎԻՆՅԱՆ